ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N26/06

«Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության
խորհրդի նիստի

ք. Երևան 5 հունիսի 2026թ.

Մասնակիցների ցուցակ՝

1. Աննա Կարախանյան
2. Անդրանիկ Ալեքսանյան
3. Արամ Վերդյան
4. Ալբերտ Տոնեյան
5. Կատարինե Գևորգյան
6. Նարինե Դերձակյան
7. Սիրանուշ Վարդանյան
8. Քրիստինա Հակոբյան
9. Իգոր Մկրտումյան
10. Վեսմիրա Հարությունյան
11. Վահան Հովսեփյան

Նիստը նախագահում էր Իգոր Մկրտումյանը: Նիստի քարտուղար ընտրվեց Վեսմիրա Հարությունյանը: Օրակարգի վերաբերյալ հնչեցին առաջարկություններ, արդյունքում միաձայն հաստատվեց հետևյալ օրակարգը՝

Օրակարգ՝

1.«Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության տնօրենի լիազորություններ ի ժամկետը երկարաձգելու մասին

2. «porn.am» դոմենային անվան գրանցման կամ մերժման վերաբերյալ «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության խորհրդի դիրքորոշման մասին

1.«Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության տնօրենի լիազորություններ ի ժամկետը երկարաձգելու մասին

Իգոր Մկրտումյանը տեղեկացրեց նիստի մասնակիցներին, որ սույն թվականի հունիսի 18 -ին լրանում է «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության տնօրեն Անդրանիկ Ալեքսանյանի լիազորությունների ժամկետը:

Առաջարկություն հնչեց երկարաձգել կազմակերպության տնօրենի լիազորությունների ժամկետը մեկ տարով: Այլ Առաջարկություններ չհնչեցին:

Առաջարկը դրվեց քվեարկլության և ձայների 11 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ հարաբերակցությամբ խորհուրդը որոշեց՝

Որոշում՝

«Ինտերենտ հանրություն» հասարակական կազմակերպության տնօրեն Անդրանիկ Ալեքսանյանի լիազորությունների ժամկետը երկարաձգել մեկ տարով՝ մինչև 2027 թվականի հունիսի 18-ը:

2. «porn.am» դոմենային անվան գրանցման կամ մերժման վերաբերյալ «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության խորհրդի դիրքորոշման մասին

Հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ խորհրդի անդամ Աննա Կարախանյանը: Ելույթի ավարտից հետո ծավալվեց քննարկում, ներկայացվեցին տարբեր տեսակետներ, տրվեցին պարզաբանումներ:

Քննարկումների արդյունքում խորհուրը ձայների 6 կողմ, 1 դեմ, 3 ձեռնպահ հարաբերակցությամբ (խորհրդի մեկ անդամ չի մասնակցել քվեարկությանը) որոշեց՝

Որոշում՝

Առաջարկել «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության տնօրենին՝ գրանցել «porn.am» դոմենային անունը:

Նիստի նախագահող՝ **Իգոր Մկրտումյան**

Նիստի քարտուղար՝ **Վեսմիրա Հարությունյան**